Հաստատվել է՝
Տնօրինության 30/06/2026թ.
թիվ 36 L որոշմամբ
Ուժի մեջ է՝ 01.07.2026թ.-ից
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
+37460757000, +37411757000, info@armswissbank.am

ՍՏՈՊ ԳՈՐԾԻՔ/Ի/ՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Սահմանումներ

Բանկ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ:

Հաճախորդ՝ Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ:

Ստոպ գործիք/ներ՝ Բանկի կողմից տրամադրվող գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս Հաճախորդին իր նախաձեռնությամբ արգելափակել առանձին կամ բոլոր հեռավար բանկային ծառայությունների հասանելիությունը հեռավար տարբերակով կամ ֆիզիկական ներկայությամբ:

Արգելափակում՝ Բանկի կողմից մատուցվող ծառայության հեռավար եղանակով հասանելիության սահմանափակում (կասեցում)՝ Հաճախորդի հայտի հիման վրա:

Ապաարգելափակում՝ արգելափակված ծառայության հեռավար եղանակով հասանելիության վերականգնումը Բանկի կողմից՝ Հաճախորդի դիմումի / հայտի համաձայն:

Ծրագրային հավելված՝ Բանկի կողմից գործարկված/տրամադրված ծրագիր կամ ծրագրերի համախումբ, Բանկի Ինտերնետ-բանկ համակարգը, «Armswiss MobileBank» մոբայլ հավելվածը, ինչպես նաև Բանկի այլ հարթակներ, որոնց միջոցով Հաճախորդին հեռավար եղանակով մատուցվում են ծառայություններ:

1. Ընդհանուր դրույթներ

1 Սույն կանոնները սահմանում են Բանկի կողմից տրամադրվող Ստոպ գործիքների օգտագործման հիմնական պայմանները և կարգը:

2 Ստոպ գործիքների նպատակը Հաճախորդին հեռավար եղանակով մատուցվող ծառայությունների հասանելիությունը արգելափակելու հնարավորություն ընձեռելն է:

3 Սույն կանոնները գործում են ի լրումն Բանկի հեռավար բանկային ծառայությունների մատուցման պայմանների և կիրառելի են Բանկի բոլոր Հաճախորդների համար:

4 Ստոպ գործիքների կիրառումը չի դադարեցնում Հաճախորդի և Բանկի միջև գործող պայմանագրերը և չի հանգեցնում հաշիվների, քարտերի, ավանդների կամ այլ բանկային ծառայությունների դադարեցմանը:

2. Ստոպ գործիքների օգտագործման կանոններ

2.1. Հաճախորդը կարող է ինքնուրույն գործարկել Ստոպ գործիքը Բանկի Ծրագրային հավելվածի միջոցով կամ ներկայացնել Ստոպ գործիքի արգելափակման հայտ (այսուհետ՝ Հայտ) Բանկի տարածքում և(կամ) հեռախոսազանգի միջոցով:

2.2. Ստոպ գործիքի կիրառումը չի պահանջում Հաճախորդի կողմից որևէ հիմնավորման ներկայացում:

2.3. Ստոպ գործիքները կիրառվում են Բանկի կողմից հեռավար եղանակով մատուցվող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծառայությունների նկատմամբ, այդ թվում՝

- Դրամական փոխանցումներ և վճարումներ,
- Քարտային գործառնություններ,
- Վարկային գործառնություններ,
- Ավանդներ,

- Կանխիկացման հայտ
- Հաշիվների և քարտերի բացման հայտեր,
- Բանկի կողմից սահմանված այլ ծառայությունների նկատմամբ:

2.4. Եթե Հաճախորդը ինքնուրույն է գործարկել Ստոպ գործիքը, ծառայության(ների) Արգելափակումը կատարվում է միայն Հաճախորդի կողմից Ծրագրային հավելվածի միջոցով համապատասխան գործողությունը հաստատելուց հետո:

2.5. Ծրագրային հավելվածով Ստոպ գործիքի կիրառման դեպքում Հաճախորդին տրամադրվում է 60 (վաթսուն) վայրկյան՝ հաստատելու կամ չեղարկելու իր կողմից ներկայացված՝Հայտը: Հայտը Հաճախորդի կողմից հաստատվելու պահից առավելագույնը 60 (վաթսուն) վայրկյանի ընթացքում Բանկը Արգելափակում է համապատասխան ծառայություն(ներ)ը Բանկի բոլոր Ծրագրային հավելվածներում, անկախ այն հանգամանքից, թե որ Ծրագրային հավելվածից է ստացվել Ստոպ գործիքի կիրառման պահանջը:

2.6. Բանկը Արգելափակում իրականացնելուց հետո Հաճախորդին ուղարկում է համապատասխան ծանուցում՝ տեքստային հաղորդագրությամբ (SMS), էլեկտրոնային փոստի կամ Հաճախորդի կողմից ընտրված այլ հաղորդակցման եղանակով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներով և կարգով:

2.7. Ստոպ գործիքը գործարկելուց հետո Ծրագրային հավելվածում Հաճախորդին ցուցադրվում է Արգելափակված ծառայությունների ընթացիկ կարգավիճակը:

2.8. Արգելափակման ընթացքում Հաճախորդը շարունակում է ունենալ իր հաշիվները, քարտերը, ավանդները և վարկերի մնացորդները դիտելու, ինչպես նաև Բանկի տարածքում դրանք օգտագործելու հնարավորություն:

2.9. Հեռավար եղանակով արգելափակված ծառայության շրջանակում որևէ գործողություն չի կարող իրականացվել՝ մինչև Հաճախորդի կողմից ծառայության ապաարգելափակումը:

2.10. Ապաարգելափակումն իրականացվում է բացառապես Հաճախորդի նախաձեռնությամբ:

2.11. Հաճախորդը կարող է իրականացնել ապաարգելափակում ինքնուրույն՝ Բանկի ինտերնետ-բանկ կամ մոբայլ-բանկ հավելվածի միջոցով, ինչպես նաև Բանկի տարածքում՝ համապատասխան Հայտ ներկայացնելով:

2.12. Նախքան Ապաարգելափակումը Բանկն իրականացնում է Հաճախորդի նույնականացում և ինքնության ստուգում՝ Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:

2.13. Բանկն իրականացնում է ապաարգելափակում ոչ շուտ, քան արգելափակման պահից 24 (քսանչորս) ժամ հետո՝բացառությամբ այն դեպքերի, երբ ապաարգելափակումն իրականացվում է Բանկի տարածքում՝ համապատասխան Հայտ/Դիմում ներկայացնելով:

2.14. Արգելափակման պահից 24 (քսանչորս) ժամը լրանալուց հետո, ապաարգելափակման Հայտ ներկայացնելու դեպքում Բանկն իրականացնում է ապաարգելափակում՝ Հայտը/Դիմումը ստանալուց հետո 12 (տասներկու) ժամվա ընթացքում: Անհետաձգելի՝ անհապաղ Ապաարգելափակում իրականացվում է միայն Բանկի տարածքում՝ համապատասխան Հայտ ներկայացնելով:

2.15. Բանկն ապաարգելափակում իրականացնելուց հետո Հաճախորդին ուղարկում է համապատասխան ծանուցում՝ տեքստային հաղորդագրությամբ (SMS), էլեկտրոնային փոստի կամ Հաճախորդի կողմից ընտրված այլ հաղորդակցման եղանակով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներով և կարգով: